



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Վ. ՓԻՓԻՉԵԱՆ

ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ

ԵՒ

ԱՆԿԵԴԾ ԸՆԾԱՅ

891. 99
Ժ - 31

Հրատարակութիւն
Թիֆլիսի Հրաժարակ,
Ենցերութեան

13 APR 2011

Մ

Վ. ՓԱՓՈՉԵՑՆ

891.99

Կ-31 Կ/

ՊԱՅՏԱՐԻ ՀՈԳԻՆ

Թ ԵՆԿԵՂԾ ԲՆԺԵՑ


(ԶՐՈՅՑՆԵՐ)



ԹԻՖԼԻՍ

Տաղարան Առևտէն Վագոնավայրեցիւն

1904



28.08.2012
1188 22

60032



ՊԱՅՏԱՌԻ ՀՈԳԻՆ

(Երկիծական գրոց)

Դօս. Պենզուրօ 29 Ապրիլ, 1904 թ., Տիֆլիս.

Յիսուս էշի վրայ նստած երուսա-
ղէմ էր իջնում:

Հանդէսը փառաւոր էր, բայց էշը
կաղում էր: Պատճառն այն էր, որ խեղճ
անասունը քարոտ տեղերից անցնելու
ժամանակ մի պայտը կորցըել էր:

Եւ ժողովուրդը պատմում է, թէ
Յիսուս բաւական շփոթւած էր, տես-
նելով որ իր գրաստը կայթելով ու
կաղելով էր գնում, տեղ-տեղ էլ սպառ-
նում էր նրան ցած նետելու:

Բայց յանկարծ, որտեղից որ էր,
ժողովրդի միջից գուրս թռաւ մի պայ-

տառ, կամպնեցրեց Յիսուսին, կռացաւ,
արագութեամբ բարձրացրեց զրաստի
ոտը և մի քանի ըոպէի մէջ այնպէս
լաւ պայտեց նրան, որ Քրիստոս ճըպ-
տաց գոհունակութեամբ և ասաց պայ-
տառին.

— Ապա, պայտա՛ո, խնդրիր ինչ կա-
մենաս, և ցանկութիւնդ կկատարւի:

Ասում են, որ Յիսուսին աներեւոյ-
թապէս ընկերացող հրեշտակներից մէ-
կը կռացաւ պայտառի ականջին և
փափսաց, որ նա երկնային արքայու-
թիւնը մտնել խնդրէր, սակայն մարդը
շատ էլ իყէալիստ չէր, բացասական
կերպով գլուխը շարժեց և ասաց Քրիս-
տոսին.

— Տէր իմ, ես մի խեղճ պայտառ
եմ, որ մի տոպրակ, մի աթոռ ունիմ
և տանս կողքին մի ընկուզենի: Յան-
կանում եմ, որ աթոռիս վրայ եղածը,
տոպրակիս մէջ մտածը և ընկուզենուս
վրայ իջնողը չկարողանան պոկ գալ—
հեռանալ, մինչև որ քո անունով չհրա-
մայեմ նրանց:

Յիսուսը ժպտաց, օրհնեց նըան
ու ասաց.

— Թող կատարւի քո ցանկու-
թիւնը:
Եւ անցաւ գնաց:

* * *

Ապրեց պայտառը երկար տարի-
ներ իր խրճիթի մէջ, իր ընկուզենու
ստերի տակ հանգիստ ու առատ: Մե-
նակ էր թէն, ունեցածն էր մի աթոռ,
մի խղճուկ տոպրակ և գործիքներ,
բայց եկամուտը լաւ էր և նա շատ
սիրում էր կեանքը:

Եւ հէնց այդ էր պատճառը, որ
մի օր խրճիթի գուանը նստած, երե-
կոյեան հովը վայելելիս, երբ տեսաւ
հեռուից դէպի իրեն եկող հոգէառ
հրեշտակին, սիրտը թունդ ելաւ, սկը-
սեց դողալ և մտածում էր թէ ինչպէս
ապառւի այդ անկոչ հիւրից:

Բայց հրեշտակը մօտ եկաւ, ող-

զումեց, ժպտաց ու ասաց.

—Դէհ, պայտառ, բաւական ապերցիք, այժմ ելիք, վերջին աղօթքը կատարիք, որովհետև հոգիդ տանելու եմ...

—Օ՞խ իմ հրեշտակ, հառաչեց պայտառը—միթէ այսպէս շուտով հարկ է կեանքը թողնել. Ես դեռ ապրել եմ ուզում, նայիք մէկ, ինչպէս լաւ է այս բոլորը՝ բնութիւնն ու հովը, լեռներն ու դաշտերը...

—Այո, խօաք շունեմ, լաւ է, բայց ինչ արած, պայտառ, ճակատագիրդ այդ է, հարկ է հոգիդ տալ:

2է, տեսաւ պայտառը որ ոչ խընդիրը և ոչ էլ բանաստեղծութիւնը՝ օգնեց նրան. Պահ մի տխուր մտածեց, յետոյ մէկէն, մտքի ծայրայեղ լարումի շնորհիւ, մտարերեց օգտւել Յիսուսի տւած շնորհներից:

—Լաւ ուրեմն, հրեշտակ, ասաց նա բաղաքավարութեամբ — հրամմէ, նստիք քիչ այս աթոռի վրայ, մինչև ես աղօթքս կատարեմ:

Եւ չոգեց աղօթելու: Հրեշտակը, յոգնած էր, նստաւ աթոռի վրայ:

Նստաւ-չնստաւ, զգաց որ բռնւել էր: Ճիզ գործեց ելնելու, թեմբը թափահարեց, բայց զարմացած տեսաւ, որ ջանքերն իզուր էին և որ նա լաւ բռնւած էր:

—Այս ինչ է, պայտառ, ի սէր Աստծոյ, գոչեց նա սարսափած—ես մեխւած եմ կարծես, ազատիք ինձ...

—Էհէ, պարոն հրեշտակ, ազատեմ քեզ, ծիծաղեց պայտառը—ինչ արած որ այդպէս եղաւ, ճակատագիրդ այդ էր...

Հրեշտակն ազաչեց, խնդրեց, պաղատեց, և վերջ ի վերջոյ, հոգին պայտառին թողնելու գնով ազատւեց և սոսկումով շտապեց երկինք:

Պայտառը ազատւած էր այս առաջին անգամը: Ազատ շունչ առաւ և օրհնեց այն ըովէն, երբ մտածել էր Յիսուսի էշին պայտել:

Մինչ այդ, հոգէառ հրեշտակը ճանապարհին, գումաւորելով, սոսկման թելաղրութեան տակ խնդիրը մեծաց-նելով՝ պատմեց ամէնքին պայտառի արածը, և երկինք հասած, գունաթափ կանգնեց Աստծոյ առաջ:

Աստած ծիծաղեց, խիստ գւար-ճացաւ—ասում է ժողովուրդը—բայց իրաւունք չտւաւ ոյժ գործադրելու:

—Եթէ կարող էք, ասաց նա—խորամանկութեամբ նրա հոգին առէք, գործ դրէք հնարքներ, բայց երբէք ոյժ:

Եւ այն ժամանակ դժոխքի չար ողբների մի խումբ, մի խորամանկ խումբ, հրաման խնդրեց պայտառին զնալ և նրա հոգին հանել պայմանով միայն, որ այդ հոգին դժոխք զնար:

—Չատ լաւ, հրամայեց Աստած—եթէ կարողանաք առանց ոյժի նրա հոգին հանել, թող ձեր բաժինը լինի:

Եւ ահա տեսաւ պայտառը, որ մի խումբ սկ, այլանդակ ողիներ, միմեանց գլխի վրայից ոստնելով, միմեանց ա-

ռաջը կտրելով՝ գալիս էին դէպի իր կողմը:

—Հօ, հօ... մտածեց նա—այժմ զեերն են գալիս: Յիսուսի պայտառը չինեմ ես, եթէ հրեշտակին խարելուց յետոյ, սրանց գլխին էլ մի խաղ շը-խաղամ:

Ու կեղծաւոր, խոնարհ, աղերսա-լից կերպարանք ստանալով՝ շտապեց դիմաւորել սկ ողիներին:

—Այ զու անամօթ, աներես պայ-տառ, ձայնեց հեռւից խմբապետը—ինչպէս ես համարձակւում հոգիդ ա-մուր բռնել և հոգէառ հրեշտակին խա-րել... Դէհ, այժմ ահա, հրաման է Աստ-ծոյ, որ այդ խորամանկ հոգիդ մեր ձեռքը յանձնես... Տղերը,—դարձաւ նա իր հետևորդներին—հեռու կացէք այդ աթոռից և տեսնենք ինչպէս սա իր հոգին չի տալ...

Այդ ճառից յետոյ սկ հոգիները խըճիթ լցւեցին, պայտառին շրջապա-տեցին, ճիշ ու աղմուկ ականջ խլաց-րին և հոգին պահանջեցին:

Պայտառը թէի սկզբում շատ վախեցաւ, բայց երբ գեերի ճիշը երկար տևեց, սրտապինդ դարձաւ և գոչեց.

— Փոքր ինչ ցած խօսեցէք, պարո՞ն գեեր, ականջս խլացաւ... ինչ է ձեր ասածը. հոգիս էք ուզում։ Ջատ լաւ, խօսք չունեմ. սակայն գուք ինչով կարող էք հաստատել, որ Աստծոց էք ուզարկած և ոչ թէ ինքնազլուխ եկողներ էք։

— Սրան նայեցէք, աղաղակեց մէկը—համարձակում է կասկածել. ուզում է մեզ էլ խարած լինել։

— Բոլորովին ոչ. ասաց պայտառը — եթէ գուք հաստատէք որ Աստած է ձեզ ուզարկել, հրամմեցէք, հոգիս ձեզ տամ։

— Ինչպէս հաստատենք, անմիտ, հարցը խմբապետը - գնանք վկայական բերենք բեզ։

— Բայց ոչ, շատ հեշտութեամբ կարող էք հաստատել. ես մի տոպրակ ունեմ, ահա, տեսէք, եթէ բոլորդ կարողացաք այնքան փոքրանալ, որ ա-

ռանց ձեռք, ոտք կամ զլուխ դուրս թողնելու տեղաւորւէք նրա մէջ, զաինձ համար ապացոյց կլինի, որ Աստած է ձեզ ուզարկել, ապա թէ ոչ, կորէք գնացէք և Աստծոյ անունը թող ոչնչացնէ ձեզ...

Ասաց, ձեռքերը մէշրին զրաւ և հպարտ սպասեց։

— Տղերը, սա տխմար է, ճշաց խմբապետը. ինչ կայ դիւրին մեզ համար, քան փոքրանալը։ Մենք չենք միթէ, որ տասնեակներով տեղաւորում ենք մարդկանց սրտի մէջ և ապրում այնտեղ... Դէհ, եկէք այս տխմարին ցոյց տանք մեր ոյժը...

Ու մտաւ տոպրակը։ Միւսներն էլ ետեից։ Այլևս ոչ մի ձեռք, ոտք կամ զլուխ գուըս չմնաց։

— Հու, տեսածը, ձայնեց ներսից խմբապետը։

— Տհայց, քըքչաց պայտառը, յետոյ մեծ մուրճն առաւ փառաւոր կերպով և սկսեց ջարզոտել նրանց կողերը։

Դեմքը ճշացին, ճիզ գործեցին
դուրս թոնելու տոպրակից, բայց ի-
զուր, բռնւած էին և լաւ բռնւած։

Աղաչեցին, լացին, հառաչեցին և
խնդրեցին. բայց պայտառը այնքան
ծեծեց նրանց, մինչև որ թեմքը թու-
լցան։

—Թող մեզ, գոշում էին դեմքը—
թող գնանք, հոգիդ թող քեզ մնայ,
չենք ուզում այդ անիծած հոգիդ, տա-
նենք՝ որ գժոխը տակնուվրայ անի...

Այն ժամանակ պայտառը յանուն
Յիսուսի՝ արձակեց նրանց և դեմքը
լեղապատառ, ճիշ ու աղմուկով այն-
պէս շուտով կծիկը դըին, որ պայտա-
ռի բըքիջն անգամ չսեցին։

Պայտառը ազատւած էր այս երկ-
րորդ անգամն էլ։ Ազատ շունչ առաւ
և նորից օրհնեց այն ըոպէն, երբ
մտածել էր Յիսուսի էշին պայտել։

* * *

Եւ երկար ժամանակ ոչ երկնքի և
ոչ էլ դժոխքի պատղամաւորներից մէ-
կը սիրտ չարաւ մի երբորդ փորձ ա-
նել և պայտառի հոգին հանել տանել։

Ժողովուրդը պատմում է սակայն,
որ բաւական ժամանակից յետոյ, դժոխ-
քի մի ամենախորամանկ զաւակ, լաւ
խորհելուց յետոյ, հրաման խնդրեց
Աստծուց մի փորձ ևս անել և պայտա-
ռի հոգին առնելու գնալ։

Հրամանը ստացաւ. կեղծութեան
դիմեց, հրեշտակի կերպարանքի առաւ
և իջաւ պայտառի մօտ։

Պայտառը հասկացաւ, որ այս ան-
գամ մի շատ խորամանկ և յանդուզն
ոզու հետ գործ ունի, որովհետեւ եկ-
տորը ոչ աթոռին էր մօտ գնում, ոչ
տոպրակին և ոչ էլ խրճիթն էր ուզում
մտնել։

— Հոգիդ տուր, կրկնում էր նա և
յամառութեամբ մնացել էր դըսումը
կանգնած։

Հրաւիրեց նրան պայտառը նստե-
լու, խրճիթ մտնելու. բայց ոգին ժըպ-

տալով զլուխը թոթւեց :

— Ո՞չ, ասաց — ինձ խաբել չես կարող. հոգիդ տուր և վերջակէտ զնենք բոլոր խորամանկութիւններիդ:

Պայտառը խորհեց քիչ, յետոյ ցոյց տալով որ այլես ճար չունի, ջլատւածի և յուսաբեկի նման ասաց.

— Ել ինչ արած, պարո՞ն հրեշտակ, քեզ խաբել չի լինում. հոգիս առ տար, բայց թոյլ տուր ինձ մի վերջին անդամ աղօթել. յետոյ, զիտես ես շատ վախկոտ եմ, թոյլ տուր ինձ չողել այս ընկուղենու տակ և եթէ ես վերջին խօսքն էլ կասեմ, ելիր ծառի վրայ և այնտեղից հոգիս առ ու տար:

Ու սկսեց այնպէս լալ, հեկեկալ, որ խորամանկ ողին ուրախացաւ թէ յաղթել էր: Ելաւ ընկուղենու վրայ, նստեց ու սպասեց:

Բայց հազիւ թէ նստել էր, զգաց, որ խաբել էր: Քիչ մնաց ուշքից զնար՝ որքան աշխատեց պոկ զալ. անհնոր եղաւ:

Հաղաչեց այլ ես: Կոացաւ զէպի

պայտառը և ասաց

— Խաբեցիր ինձ ես, պայտառ, հոգիդ քեզ մնայ թող, միենոյն է, զու ինձ ընդմիշտ ոչնչացըիր, որովհետեւ կեանքումս ես չէի խաբւել այսպէս. թող տուր ինձ գնալ...

— Ահա այդպէս... հպարտացաւ պայտառը — յանուն Յիսուսի գնա և պատմիր ընկերներիդ, որ հեշտ բան չէ Քրիստոսի պայտառի հոգին հանելը...

Եւ ելաւ ողին, ու յուսահատ, կաղն ի կաղ հեռացաւ: Իսկ պայտառը հըպարտ, ապահով այլես, սկսեց կեանք վարել և բոլոր հոգէառների վրայ ծիծաղել...

* *

Այստեղ կանգ է առնում ժողովրդի գրոյցը և այստեղ սկսում է գրողի յանդինութիւնը: Նրան թում է թէ

զրոյցը լրացած չէ, քանի որ պայտապը վերջ ի վերջոյ անշուշտ հոգին տւաւ, մեռաւ:

Բայց ինչպէս, ով էր ուրեմն հոգէառը, ո՞ր յանդուզնը և ո՞ր խորամանկը, որ արաւ այն, ինչ չէին արել երկնքի և գժոխքի ոգիները:

Ահա թէ բանը ինչումն էր:

Մի օր պայտառը մտածեց այլքս մննակ շմար, տուն ու տեղ լինել և կին ունենալ:

Ու գտաւ այդ կինը. զեղեցիկ, զրաւիչ, կոկիկ մի կին, որ խրճիթ մտնելուն պէս, ըստ կանացի սովորութեան, սկսեց ամեն ինչ տակնուվրայ անել: — Նախ հնացած աթոռը փշրեց ու վառեց, յետոյ, տոպրակից թռնիրի սրբիչ կտրտեց շինեց, իսկ ընկուզենին, զանելով շատ հնացած ու տգեղ, կտրտեց — ձգեց...

Խեղճ պայտառն առիւծի լեղի էր կերել, որ կարողանար դիմաղրել կնոջ:

Եւ կինը այնպիսի դրութեան մէջ զըեց թշւառ պայտափին, որ սա սըրտ-

նեղած, տանջւած, զառնութեան հասած, ինքը խնդրեց Աստծուն՝ իր հոգին առնել...

Եւ Աստւած նրա հոգին առաւ: Իսկական հոգէառը, այդպիսով, միայն կինը եղաւ...



Նրան չճանաշեց, իսորը գլուխ տւեց և
քաղաքավարութեամբ հարցրեց թէ ով
էր նա, ինչու էր եկել իրանց քա-
ղաքը:

Իշխանը—և կամ, եթէ կուզէք,
սատանան—արհամարհանքովնայեցնր-
ան և սսաց.

—Քեզ ինչ, ինչու պատասխանել
քեզ:

—Հաճելի է ինձ այդ, ասաց հա-
րուստն. ես այս քաղաքի հարուստն
եմ և իսկոյն կարող եմ արգելել քեզ
մի քայլ անելու:

—Լաւ, եթէ այդպէս է, իմացիր
ուրեմն, որ ես սատանան եմ:

—Հըմ... արեց հարուստը— ի-
րաւ... և ինչու ես եկել մեր քա-
ղաքը:

Ու սիրալ դող ելաւ:

—Այսօր, ասաց սատանան—ձեր
քաղաքում տօնավաճառ կայ. եկել եմ
ստանալու այն բոլոր ընծաները, ո-
րոնք սրտանց, անկեղծօրէն ինձ կը
նւիրւեն:

ԱՆԿԵՂԾ ԸՆԾԱՅ

Ապրում էր քաղաքում մի հարուստ
մեծ մարդ: Ենքան հարուստ, որ նրա
համար ոսկին ու արծաթ, զարդ ու
զարդարանք անպակաս էին: Բայց նա
դրանցից ոչ միայն աղքատի չէր ո-
շինչ տալիս, այլ ընդհակառակը, ինքը
նրանցից կողոպտում էր, գյլում և շատ
ընտանիքների թշւառացնում — թող-
նում:

Եւ մի օր, երբ նա փողոց էր ե-
լել, հանգիպեց սատանային, որ հա-
գել էր մեծ իշխանի պէս: Հարուստը

— Ճատ լաւ, ասաց հարուստը —
քեզ այդ չեմ արգելիլ, բայց թոյլ տուր
ինձ ընկերանալ և տեսնել թէ որպիսի
անկեղծ ընծաներ են տրւում քեզ:

— Համաձայն եմ, գնանք:

Ու երկումն էլ մտան վաճառա-
նոց: Հարուստը լցնել տւառ երկու բա-
ժակ զինի և մէկը տալով սատա-
նային՝

— Վերցրո՞ւ, ասաց — ահա ինչ որ
տալիս եմ քեզ սրտանց, անկեղ-
ծօրէն:

Բայց սատանան չվերցրեց. հաս-
կացաւ որ ծաղը էր այդ և կամ վա-
խից ստիպւած ընծայ:

Այդ միջոցին նրանց մօտով վա-
զում էր մի զիւղացի, աշխատելով բըռ-
նել խրտնած և փախչող կովին: Խեղճ
զիւղացին սաստիկ յոգնել էր, շատ էլ
նեղսրտւել վազելուց, ուստի և գո-
չեց.

— Ահա սատանան տանի քեզ, ա-
նիծեալ անասուն:

— Լսեցի՞ր. ասաց հարուստը սա-
տանային — վերցրո՞ւ այդ կովը, քեզ ըն-
ծայեցին:

— Ո՛չ, պատասխանեց սատանան —
ընծան սրտանց չէր: Եթէ այդ կովը
վերցնեմ, շատ ցաւ կըպատճառեմ խեղճ
զիւղացուն:

Փոքը ինչ հեռու նրանք համովի-
պեցին մի կնոջ, որ աղաղակում էր.

— Սատանան տանի քեզ, հերիք
չէ շարութիւնդ...

— Վերցրո՞ւ, ասաց հարուստը սա-
տանային — մանուկը քեզ ընծայւե-
ցաւ:

— Ո՛չ, պատասխանեց սատանան
— սրտանց ընծայ չէր: Ու անցաւ:

Հարուստն ու սատանան այդպէս
մտան բազմութեան մէջ:

Այնտեղ, երկու արհեստաւոր կռւում
էին միմեանց հետ: Վերջապէս մէկը,
որ սաստիկ զայրացած էր, կանչեց
կատաղութեամբ.

— Կորիք սատանայի հետ, բաւա-
կան չէ...

— Վերցրու դրան, ասաց հարուստը սատանային —ահա քեզ մի ընծայ:

— Անկեղծ ընծայ չէ, ասաց սատանան —այս բռպէին դա բարկութիւնից կուրացել է, բայց եթէ վերցնեմ ընկերին, առաջին ցաւողը ու զղացողը հինգ դա կլինի...


Եւ այսպէս երբ նորա մտան տօնավաճառ ու գեռ սատանան անկեղծ ընծայ չէր գտնում, յանկարծ մի ծեր, ցնցոտի հազած մի կին կտրեց նրանց առաջը, կանգնեցնելով հարուստին, կատաղաբար նրան նայեց և գոռաց.

— Անիծւնս դու, անիծւնս, մեր բրտինքով և մեր արիմով հարստացած վաշխառն... մինչև երբ դիմանանք քեզ, դու յափշտակեցիր իմ վերշին ապաւէն - կովը, դութ չունեցար անօթի թողնելու ամբողջ ընտանիքներ. սատանան թող տանէ քեզ...

Եւ եղբ ճպարուստը պատրաստում էր բարկանալու, սատանան բռնեց նրա կոկտրդիցն ու ասաց.

— Ահա վերջապէս մի անկեղծ ընծայ, որ տրում է ինձ սրտանց, խորունկ փափազով և ես ուրախութեամբ ընդունում եմ նրան...

Ասաց, կորպեց հարուստին և անհետացաւ նրա հետ...



այ երթեսունից տարբարակ այդ վայրութիւնը
ու ամենու համար այս աշխատութիւնը պահանջում է առաջական մասունք մասունք

ՃՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸՑԵՄՆԻ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

ԽԵԼՕՔ ԱՔԱԲԱՂՆԵՐ

bh

ՈՒԲԻՇ ԶՐՈՅՑՆԵՐ

Գինն է 5 կուլ.

«Ազգային գրադարան»



NL0369865

60032

ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ

1. ԹԱԹՄԻՄԱՆ ԳԻՋԵՐԸ, ԼԷօի, գինը 5 կ.
2. ԶԵ ՏՀԱՄԱՐԴ ԵՒ 1 ԱՂՁԻԿ, Մակ-
սիմ Գօր'կիյի, թարգ. Մուշէ վ. 5 կ.
3. ԽԵՆԹԸ և ուրիշ պատմւածքներ,
վ. Փափազեանի 10 կ.
4. ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ, պատմւածք
~~Ա. Անդրադանեանի~~ 5 կ.
5. ՍՊԻՏԱԿ ԵԱՂԻԿԸ, է. ՕԺԷՇԿօի,
թարգ. Ջահվերգիանի 5 կ.
6. ԱՐՏԻՍՏԸ, Ջիրվանզաղէի 15 կ.
7. ԵՂՕԻ ՔՈՈ ԲԱԽՏԸ, Ջահրիարի 3 կ.
8. ԵԱՊՈՆԻԱ, Խաչատրեանի 3 կ.
9. ԴԱՆԿՈԻ ՍԻՐՏԸ, Մակսիմ Գօր'-
կիյի, թարգ. Ա. Աթայեանի 3 կ.
10. ԻՄ ՈՒՂԵԿԻՑԸ, Մակսիմ Գօր'կիյի,
թարգ. Ա. Աթայեանի 10 կ.
11. ՄԵԽ ՓԱԿԱՆՔ և ԱՌԵՒԾԻ ՄԱՀԸ
վ. Փափազեանի 3 կ.
12. ՊԱՅՏԱՌԻ ՀՈԴԻՆ և ԱՆԿԵՂԾ ԸՆ-
ծԱՅ, վ. Փափազեանի 4 կ.